Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«15» դեկտեմբեր 2021թ. ք. Սիսիան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Սիսիան բաժանմունքի հարկադիր կատարող Հայկ Թանգյանս, ուսումնասիրելով 21.12.2020թ-ին հարուցված թիվ 06949020, 01.03.2021թ.-ին հարուցված թիվ 07256940, թիվ 07256868, թիվ 07256923, 02.03.2021թ.-ին հարուցված թիվ 07256892, 09.06.2021թ.-ին հարուցված թիվ 07710850 և 20.10.2021թ.-ին հարուցված թիվ 08205789 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ1/0107/02/20, թիվ ՍԴ1/0161/02/20, թիվ ՍԴ1/0258/02/20, թիվ ՍԴ1/0111/02/20, թիվ ՍԴ1/0523/02/20 և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԵԴ/7162/17/20 կատարողական թերթերի համաձայն պետք է Արտակ Գալուստի Խոսրովյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել համապատասխանաբար 5.229.976 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ1/0256/02/21 կատարողական թերթերի համաձայն պետք է Արտակ Գալուստի Խոսրովյանից հօգուտ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 357.616 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ3/0976/02/20 կատարողական թերթերի համաձայն պետք է Արտակ Գալուստի Խոսրովյանից հօգուտ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 384.032 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Կատարողական վարույթներով վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Արտակ Գալուստի Խոսրովյանին պատկանող բռնագանձման ենթակա գույք չի հայտնաբերվել, իսկ դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ միջոցներն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հազարապատիկի և ավելի չափով բավարար չեն պահանջատերերի հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, ,,Դատական ակտերի հարկադիր կատարման մասին,, ՀՀ օրենքի 28-րդ, 28.1 հոդվածի և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել՝ թիվ 07256923,թիվ 07256868, թիվ 07256892, թիվ 07256940, թիվ 06949020, թիվ 07710850 և թիվ 08205789 կատարողական վարույթները 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարանի կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից հետո երկամսյա ժամկետում:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝ **Հայկ Թանգյան**